ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Գոռ Մեհրաբյան, Գնումների քաղաքականության վարչության գլխավոր մեթոդաբան:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Թբիլիսի, Վրաստանի Հանրապետություն, 2024 թվականի հոկտեմբերի 6-ից մինչև 11-ը:

3. Հրավիրող կողմը.

Ասիական Զարգացման Բանկ:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Պետություն-մասնավոր գործընկերության հիմքերը» թեմայով դասընթացին, ինչպես նաև «APMG PPP Certification Program»-ի շրջանակում «Foundation» մակարդակի քննության հանձնում:

5. Քննարկված թեմաները.

1) ՊՄԳ հայեցակարգի առարկայի ներկայացում. ՊՄԳ պայմանագրի հիմնական բնութագրերը:
2) Հանրային ենթակառուցվածքում և ծառայությունում մասնավորի մասնակցությունը. ինչն է համարվում ՊՄԳ և ինչը չի համարվում ՊՄԳ:
3) ՊՄԳ-ի տեսակները և տերմինաբանությունը:
4) ՊՄԳ-ի օգտագործման ոլորտները. ենթակառուցվածքի սահմանում, ՊՄԳ-ի տեսակները, ոլորտներ, որտեղ հիմնականում կիրառվում է ՊՄԳ:
5) ՊՄԳ-ի կիրառման դեպքերը՝ մոտիվացիան և նախազգուշացումները:
6) ՊՄԳ ծրագրի ստանդարտ բազային կառուցվածքը:
7) Մասնավոր ֆինանսավորմամբ ՊՄԳ-ի ֆինանսավորման մեթոդները:
8) Ծրագրի ձախողման պատճառները. ծրագրի ամբողջական կառավարման և նախագծի պատրաստման անհրաժեշտությունը:

9) ՊՄԳ շրջանակային պայմանների հայեցակարգի ներածությունը և նախնական շրջանակային պայմանների դիտարկումը: Ասպեկտներ, որոնք կարևոր են մասնավոր հատվածի համար՝ կապված շրջանակային պայմանների և շուկայի հետ:

10) ՊՄԳ գործընթացի ցիկլի ակնարկ: ՊՄԳ պայմանագրի պատրաստում, կառուցվածքավորում և կառավարում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ընթացքում փորձագետի կողմից ներկայացվել են վերոնշյալ թեմաները, ինչպես նաև տարբեր երկրներում ՊՄԳ ձևաչափով իրականացված ծրագրերը, մասնակիցների և փորձագետի միջև տեղի են ունեցել դասընթացին առնչվող թեմաների վերաբերյալ քննարկումներ ու փորձի փոխանակում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել պահպանել փորձի փոխանակման շարունակականությունը, ինչը հետագայում հնարավորություն կտա բարելավել ՊՄԳ ծրագրերի իրականացման գործընթացները, ինչպես նաև հնարավորության դեպքում համագործակցել «APMG PPP Certification Program»-ի շրջանակում հետագայում կազմակերպվելիք դասընթացներին մասնակցության մասով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Գոռ Մեհրաբյան
15.10.2024թ.